

139. ՓԱՐԻ

Մին մարթ ուրան կընգանան շատ զարհլան տարած ա ինում, օգում ա կըլխան ռադ անու Բիրանդի հըներանց տուն քյինանլիս քըռն յա տում, քըցում մին ճիրավըր, ըռըխեն մին քար տինում, հըզե ինում։

Մին քանի օր վըր կենում ա, տուն քյինանլիս ճիրըվըրեն քարը պիցըրցընում ա, ասում, Թա տեսնա կենդյը սաղ ա՞։ Հենց վըր քարը պիցըրցընում ա, տեսնում ա քարան կացած, կոչ նկած մին օր։ Էտ օրը տըրա վրեններն ա ինդյում, զաշանք-պըղատանք անում, վըր ուրան ըզադի էտ կնդանն անա, ասնան էլ ասում.—Հինչ լիվոթուն ասես, կանեմ, Թանքյի վըր Փարուն քըշտան ինձ տուա օնեսա (էտ կընդանը անումը Փարի[1] յա ինում)։ Էտ մարթը օգեն տուա ա օնում, Փարուն անա ըզադում։ Օրը էտ մարթին ասում ա.—Քյիննանկան ըմ էսհինչ Թաքավըրեն ըխեբկանը պկըավը տամ։ Հու վըր էլ կյա, պեց չըմ Թուղըլական, տու վըր կյա, ըխեբկանը պեց ըմ Թուղըլական, հըռանամ։ Էտ վախտը Թաքավըրը քեզ մին սուրու-պեռանը վըեսկի յա տըլական։ Տըրանա ասը քյիննանկան ըմ մին օրիշ Թաքավըրու ըխեբկան

---

[1] Ղարաբաղի շատ գյուղերում տարօրինակություններ ունեցող կանանց «Փարի», «գլուխ Փարի» կամ «կյլիթ Փարի» են անվանում։

պըկավը տամ, քեզ հիշքան դաշանք-պըղատանք անեն, ըստիրին, կյանվուշ կոշտըս։ Թա վըեր շիլ ինգյիր, եկեր, քեզ կըծըլական ըմ։

Էտ օցը քյինանմ ա տեղետ Թաքավըերեն ըխճըկանը պըկավը տամ, ախճիգյը ծանդր հիվընդանում ա։ Շատ մարթիքյ ըն քյինանմ-կյամ, կարում չըն Թաքավըերեն ըխճըկանը օցեն անա ըզադեն։ Էտ մարթը քյինանմ ա, Թա ես կըկարեմ։ Հենց վըեր տա նի յա մըններում Թաքավըերեն ըխճըկանը օթաղը, օցը եր ա կենում, տանա կյամ։ Թաքավըերը էտ մարթին օխտը պեռնը վըեսկի յա տամ, հըզե քըցանմ։

Մին քանի ամես վըեր անց ա կենում, օցը քյինանմ ա մին օրիշ Թաքավըերու ըխճըկանը պըկավը տամ։ Հիշքան մարթ ըն ծեն տամ, պանրանմ, կարում չըն ըզադեն։ Խաբարը հըսնում ա էտ Թաքավըերեն, Թա պա էսհինչ տեղը իստի մին մարթ կա, վըեր էսհինչ Թաքավըերեն ըխճըկանը տի մին օցա ըզադալ։ Էտ մարթին ծեն ըն տամ, տանում։ Տա վըեր քյինանմ ա, օցն ասում ա.— Պա քեզ ասալ չը՞մ հիշքան էլ ծեն տան, կյանվուշ։ Մեհենգյ հունց կա՞նես, վըեր սըրան պեց Թողեմ, քեզ փըռնեմ։ Էտ մարթն էլ Թա՝ ես տըրա հետե չըմ եկալ, քու դարդատ ըմ եկալ, էս ա մին քանի օր ա, վըեր Փաարին ճիրըվըերեան տանա ա եկալ, քեզ ա շոռ կյամ, տեղըտ գյիդացալ ա, Թուշ ըստեղ ա կյամ, Թա կարում ըս, կըլխետ ճարը տես։ Էս օցը Փաարին անումն ըսկանալն ան փախճիլը մին ա անում։ Թաքավըերեն ախճիգյը օցան ըզադվում ա, էս Թաքավըերն էլ ըստեղ ա էտ մարթին մի օխտը պեռնը վըեսկի տամ, հըզե քըցանմ։